ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 07.03.2013թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳԲԽ-14/13 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-14/13 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «ԳԱԿՍ» ՍՊԸ-ի կողմից 15.02.2013թ. ներկայացված բողոքը, ինչպես նաև ուսումնասիրելով ԳԲԽ-14/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը պարզեց.

1. **«ԳԱԿՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքով «ԳԱԿՍ» ՍՊԸ-ն հայտնել է, որ վերջինս գրանցված է որպես «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրով գնումներ կատարելու ընթացակարգի հնարավոր մասնակից: Ընկերությունը նշել է, որ տեղեկացվել է, որ «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՇՀԱՊՁԲ-11/2 ՎՆՏԻՊ» ծածկագրով շրջանակային համաձայնագրով գնում կատարելու ընթացակարգ, որի բացումը տեղի է ունեցել 2013թ. հունվարի 21-ին, սակայն Ընկերությունը նշված ընթացակարգին մասնակցելու որևէ ծանուցում կամ մասնակցության հրավեր չի ստացել:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի 2-րդ ենթակետով հստակ սահմանված է, որ հրավերը, էլեկտրոնային եղանակով, միաժամանակյա ծանուցմամբ ուղարկվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «ա» ենթակետի համաձայն հրապարակված շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցների, եթե գնումը կատարվում է շրջանակային համաձայնագրերի միջոցով:

«ԳԱԿՍ» ՍՊԸ-ն գտնում է, որ «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կողմից խախտվել է ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից Ընկերությունը խնդրել է դադարեցնել «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպած «ՇՀԱՊՁԲ-11/2 ՎՆՏԻՊ» ծածկագրով շրջանակային համաձայնագրով գնում կատարելու ընթացակարգ հայտարարելու մասին որոշումը:

2. «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 22.02.2013թ. N 04/032-369 գրությամբ դիմել է «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 15.02.2013թ. «ԳԱԿՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

«Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ը (այսուհետև՝ նաև Պատվիրատու) 04.03.2013թ. N 154ա գրությամբ էլեկտրոնային եղանակով, «ԳԱԿՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«ՇՀԱՊՁԲ-11/2 ՎՆՏԻՊ» ծածկագրով շրջանակային համաձայնագրով գնում կատարելու ընթացակարգի հրավերը ուղարկվել է 10.01.2013թ. դրությամբ գրանցված բոլոր մասնակիցներին և տեխնիկական (համակարգչային) պատճառներով «ԳԱԿՍ» ՍՊԸ-ին հրավեր չի ուղարկվել:

3. ԳԲԽ-14/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հանձնաժողովին ներկայացրել է իր եզրակացությունը և առաջարկել է «ԳԱԿՍ» ՍՊԸ-ի կողմից 15.02.2013թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը բավարարել:

4. ԳԲԽ-14/13 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-14/13 բողոքը քննող հանձնաժողովի հիմնավորումները և եզրահանգումները.

Հանձնաժողովն ուսումնասիրել է «ԳԱԿՍ» ՍՊԸ-ի (այսուհետև՝ նաև Ընկերություն) կողմից 15.02.2013թ. ներկայացված բողոքը, «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի (այսուհետև՝ նաև Պատվիրատու) Կենտրոնին հասցեագրված 04.03.2013թ. N 154ա գրությունը, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի եզրակացությունը:

«Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՇՀԱՊՁԲ-11/2 ՎՆՏԻՊ» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

«ԳԱԿՍ» ՍՊԸ-ն Կենտրոնին ներկայացված բողոքով հայտնել է, որ վերջինս գրանցված է որպես «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հնարավոր մասնակից, ինչպես նաև նշել է, որ Ընկերությանը հայտնի է դարձել, որ «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կողմից սննդամթերք ձեռք բերելու նպատակով կազմակերպվել է «ՇՀԱՊՁԲ-11/2-ՎՆՏԻՊ» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետև՝ Ընթացակարգ), որով հայտերի բացումը տեղի է ունեցել 21.01.2013թ., սակայն Ընկերությունը նշված Ընթացակարգին մասնակցելու որևէ ծանուցում կամ հրավեր չի ստացել:

«Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ը Կենտրոնին էլեկտրոնային եղանակով ուղարկված 04.03.2013թ. N 154ա գրությամբ հայտնել է, որ «ՇՀԱՊՁԲ-11/2 ՎՆՏԻՊ» ծածկագրով շրջանակային համաձայնագրով գնում կատարելու ընթացակարգի հրավերը ուղարկվել է 10.01.2013թ. դրությամբ գրանցված բոլոր մասնակիցներին, սակայն տեխնիկական պատճառներով «ԳԱԿՍ» ՍՊԸ-ին հրավեր չի ուղարկվել:

Պատվիրատուի ներկայացուցիչները այդ մասին հայտնեցին նաև Կենտրոնում 2013 թվականի մարտի 4-ին կազմակերպված բանավոր լսումների ժամանակ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ Գնումների աջակցման կենտրոնը գնահատում է մասնակիցների՝ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը, կնքում է շրջանակային համաձայնագրեր, կազմում և տեղեկագրում հրապարակում է շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցների ցուցակը:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերը էլեկտրոնային եղանակով, միաժամանակյա ծանուցմամբ ուղարկվում է օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «ա» ենթակետի համաձայն հրապարակված շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին, եթե գնումը կատարվում է շրջանակային համաձայնագրերի միջոցով:

Հրավերի 1-ին մասի 6.1 ենթակետի համաձայն՝ նույն ընթացակարգի շրջանակներում գնում կատարելու նպատակով պատվիրատուն շրջանակային համաձայնագրեր կնքած բոլոր անձանց միաժամանակ ծանուցում է հայտ ներկայացնելու մասին՝ կցելով կնքվելիք պայմանագրի նախագիծը և ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը:

Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «ա» ենթակետով, Կարգի 41-րդ կետի 2-րդ ենթակետով, Հրավերի 6.1 ենթակետով սահմանված պահանջները, որի արդյունքում բողոքաբեր կազմակերպությունը զրկվել է Ընթացակարգին մասնակցելու հնարավորությունից:

Այսպիսով, գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Վերոգրյալի հիման վրա և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետը՝ գնումների բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ԳԱԿՍ» ՍՊԸ-ի կողմից 15.02.2013թ. Կենտրոնին ներկայացված բողոքը բավարարել:

2. Դադարեցնել «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կողմից սննդամթերք ձեռք բերելու նպատակով կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-11/2-ՎՆՏԻՊ» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ հայտարարելու մասին որոշումը:

Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Արման Մնացականյան

Անդամներ՝ Վահե Բաբայան

Սեդրակ Վարդանյան